# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

գ. Շիրակամուտ

№—Ե -03/34

«08» 02. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 5-Ա, թիվ 6-Ա և թիվ 7-Ա, որոշումները :

Առդիր 3էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

## ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնք

# Ո Ր Ո Շ Ու Մ

„02" փետրվարի 2017 թվականի N 5-Ա

### 3.43623 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ»-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածով , ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ կառավարության 06/10/2005 թվականի թիվ 1913-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մել և Միլ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրված հատակագիծը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շիրակամուտ համայնքում 06-087-0140-0001 ծածկագիրը ընդգրկված է ՀՀ կառավարության 06/10/2005 թվականի N1913-Ն որոշմամբ համայնքին սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի ցանկի մեջ , հաստատել Շիրակամուտ համայնքի սեփականության իրավունքը 06-087-0140-0001 ծածկագրից առանձնացված 3.43623 հա արդյունաբերական , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Հողամասին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝ Շիրակամուտ համայնք, Կայարանի փող., 31/3:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Երանոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Շիրակամուտ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 02 » փետրվարի 2017թվականի N6-ԼՌ

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01022018-06-0030 իրավունքների գրանցման վկայականը , ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 2006թ. Մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձն ունի գնման նախապատվության իրավունք

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի 06-087-0140-0003 ծածկագրի տակ գտնվող , այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 307,2 քմ արտաքին մակերեսով անասնագոմը ՝ 337920 ՀՀ դրամով և դրանցով ծանրաբեռնված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0,03073 հա մակերեսով հողամասը 41000 ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Հովհաննես Սամվելի Մարդոյանին:
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել շինության և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

**Համայնքի ղեկավար՝** Ա. Երանոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 08 » փետրվարի 2018 թվականի N7- Ա

**ԱԼՎԱՐԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2314069 վկայականը և Ալվարդ Եղիազարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ալվարդ Թորգոմի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակամուտ համայնքի 14-րդ փողոցի վրա գտնվող 06-087- 048-004 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տալ «գ. Շիրակամուտ, փողոց թիվ14 , թիվ 36 » հասցեն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան